



«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

№ 002 27 փետրվարի 2020թ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի
Ընդհանուր ժողովի 2020թ. փետրվարի 27-ին տեղի ունեցած թիվ 2 նիստի

Առաջնորդվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի կանոնադրության 7.3 կետի «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի հիմնադիր Մ.Նանյանի հրավերով տեղի ունեցավ Քոլեջի Ընդհանուր ժողովի հերթական նիստը:

Քոլեջի Ընդհանուր ժողովի աշխատակարգի 5 կետի առաջին ենթակետի համաձայն՝ Ընդհանուր ժողովի նախագահ՝ Մ.Նանյանը բացելով անդրանիկ նիստը նախ ողջունեց բոլոր մասնակիցներին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ֆինանսատնտեսական հարցերի, նախորդ տարվա բյուջեի կատարողականի և ընթացիկ տարվա նախահաշվի հաստատում:

(Ձեկուցող՝ Հաշվապահ՝ Ա. Սարգսյան):

2. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ներքին նորմատիվ իրավական ակտերի ընթացքի մասին:

(Ձեկուցող՝ ՄՌԿ և Ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան):

3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի մասին:

(Ձեկուցող՝ Տնօրեն՝ Ի. Վարդանյան):

1. **Լսեցին.** Հաշվապահ՝ Ա.Սարգսյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019 թվականի բյուջեի կատարողականի և 2020 թվականի նախահաշվի հաստատում վերաբերյալ:

Ա.Սարգսյանը ներկայացրեց 2019թ. բյուջեի կատարողականը նշելով, որ այս հարցը մասնակի քննարկվել է նաև Ընդհանուր ժողովի անդրանիկ նիստի ընթացքում: Ինչպիսիք,

ամփոփ տեղեկատվությունը ներկայացնելուց հետո, հավելեց, որ բյուջով նախատեսված բոլոր ծախսերը կատարված են (հիմք՝ 2019թ. կատարողական): Հաջորդիվ, Ա.Սարգսյանը նշեց, որ 2019թ. բյուջեի համալրումը իրականացվել է մասնակի, ուսման վարձերի գանձման ընթացքը և արդյունքները բավարար չեն: Ուսանողների մեծ մասի մոտ առկա են ուսման վարձավճարների պարտքեր: Նման պատկերը ֆինանսական միջոցների հավաքագրման տեսանկյունից ռիսկային են:

Ինչ վերաբերում է բյուջեով նախատեսված որոշ խնայողություններին, ապա առաջարկեց 2020 թվականի բյուջեի նախահաշվի նախագծում «Զարգացման ֆոնդ» հոդվածի 10%-ը ավելացնել ևս 5%-ով:

Հիմնավորելով նման առաջարկը, Ա.Սարգսյանը մեջբերում կատարեց Քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի նապատակ 3-ի 6-րդ կետը: Պլանավորված ավելացումներով մինչև ՌԶԾ-ի ավարտը Քոլեջի «Զարգացման ֆոնդի» բյուջեն կհասնի մոտավորապես 30%-ի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը իր ելույթում նշեց, որ համաձայն ՌԶԾ-ի նախատեսվում է համալիր միջոցառումներ Քոլեջի ֆինանսական միջոցների կայունության ապահովման ուղղությամբ, մասնավորապես՝ աշխատանքներ են տարվում օտար լեզվով առնվազն մեկ կրթական ծրագրի իրականացում և օտարազգի դիմորդների ներգրավում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի 2019 թվականի բյուջեի կատարողականը գնահատել բավարար:
 2. Հաստատել Քոլեջի 2020 թվականի բյուջեի նախագիծը:
- 2. Լսեցին.** Քոլեջի ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ներքին նորմատիվ իրավական ակտերի ընթացքի վերաբերյալ:
- Բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանը իր ելույթում ներկայացրեց Քոլեջում 2019 թվականից գործարկվող ներքին նորմատիվ իրավական փաստաթղթերը (ցուցակը կցվում է): Հանգամանորեն ներկայացրեց բոլոր փաստաթղթերի անհրաժեշտությունը և օգտակարությունը, մասնավորապես այն փաստաթղթերի, որոնք նոր են մշակվել և դրվել շրջանառության մեջ: Ինչ վերաբերվում է նոր փաստաթղթերի արդյունավետությանը, ապա նախատեսվում է 2 տարի անց կազմակերպել մշտադիտարկում և գնահատել: Այն փաստաթղթերը որոնք վերանայվել և լրամշակվել են ընդհանուր առմամբ քոլեջի անձնակազմը տեղեկացված էր և առանց որևէ լուրջ խոչընդոտների գործարկվում են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ընդհանուր ժողովի նախագահ՝ Մ.Նանյանը իր ելույթում նշեց, որ Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին ընդառաջ խիստ անհրաժեշտ է հիմնովին բարելավել Քոլեջի կառավարման համակարգը, որն արդեն իսկ մեկնարկել է, այդ թվում նաև բոլոր նորմատիվ իրավական փաստաթղթերը պետք է հանգամանորեն ուսումնասիրել, անհարժեշտության դեպքում վերանայել և լրամշակել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանի տեղեկատվությունը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ներքին նորմատիվ իրավական ակտերի ընթացքի վերաբերյալ ընդունել ի գիտություն:
 2. Հանձնարարել Տնօրեն Ի.Վարդանյանին այս գործընթացի վերահսկողությունը իրականացնել ամենօրյա ռեժիմով:
 3. Տնօրինական խորհրդին հանձնարարել սեղմ ժամկետներում կազմակերպել ուսումնասիրություններ, վերհանել առկա խնդիրները և զեկուցել Ընդհանուր ժողով:
- 3. Լսեցին.** Տնօրեն Ի.Վարդանյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի վերաբերյալ:

Տնօրեն Ի.Վարդանյանը հակիրճ ներկայացրեց 2019-2024 թթ. ՌԶԾ-ի պլան ժամանակացույցով կատարված աշխատանքները, համաձայն հաստատված վերջնարդյունքների: Ամփոփելով ելույթը, Ի.Վարդանյանը ավելացրեց, հաստատված ԳԱՑ-ին համապատասխան հաջորդ նիստին կներկայացվեն 2019-2020 ուստարվա աշխատանքների վերաբերյալ կատարողական զեկույց:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել տնօրեն Ի.Վարդանյանին ժողովի հաջորդ նիստին ներկայացնել 2019-2020 ուստարվա կատարողական զեկույց ըստ ՌԶԾ-ի ժամանակացույցի:

Նախագահ՝

Մ.Նանյան

Քարտուղար՝

Հ.Գրիգորյան